ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2017թ. հունիսի 21 -ին, N 64 -Ա

ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ապարանի Վ.Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խարհրդի քարտուղարի 2017 թվականի մայիսի 31-ի գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Ապարանի տարածաշրջանի առաջին կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1)<<Ապարանի Վ.Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում <<Նալբանդյան Ռուզաննա>> բառերը փոխարինել <<Ղուկասյան Սիրամարգ>> բառերով:

Գ.Գյոզալյան